

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ

ԱՂՕԹԻ ԵՒ ԾՈՍԱՊԱՅՈՒԹԵԱՆ
ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Աշակերտները առանձին
հարցուցին Յիսուսին. «Մենք ինչո՞ւ
չկրցանք հանել զայն՝ այսինքն դեւը»:
Յիսուս պատասխանեց. «Այդպիսի ոգի
մը միայն աղօթքով եւ
ծոմապահուածամբ կարելի է հանել»
Մտթ. 17.19-21:


Դիւահարութեան եւ պոռնկութեան
գոյգ ախտերը պահեով եւ աղօթեով կը
բուժուին միայն: Ինչպէս, որ մարմինի
ցաւերը շատ են ու այլատեսակ, եւ ցա-
ւերու համաձայն՝ դեղերն ալ բազմաթիւ
են, նոյնպէս մեղքերը ահագին են ու
բազմատեսակ եւ մեղքերու համաձայն ալ
ապաշխարութիւնը բազմապիսի է:
Ինչպէս, որ ցաւի մը դեղը ուրիշ ցաւ մը
չի մեղմացնէր, այսինքն կրունկը
առողջացնող դեղը չի կրնար աչքը
բուժել, այսպէս ալ մեղքի մը ապաշ-
խարութիւնը կրնայ օգտակար չըլլալ
ուրիշ մեղքի մը: Ահա, թէ ինչո՞ւ Քրիս-
տոս կ'ըսէ. «Այս տեսակի մեղքերը ուրիշ
ոչ մէկ բանով կը բժշկուին, բայց միայն
ծոմով եւ աղօթեով» (Մատթ. 17.20):
Ինչպէս, որ բժիշկը որոշ ցաւի դարմա-
նումին համար մասնաւոր դեղ կը յանձ-
նարարէ, նոյնպէս Քրիստոս պոռնկու-
թեան եւ դիւահարութեան համար ծոմ եւ
աղօթք կը թելադրէ:

**Յորդորակներ Բարսեղ Մաշկետրոցի
Վաղը՝ Երկուշաբթի, 12 Փետրուար
2024, Քառասնօրեայ պահեցողութեան
առաջին օրն է: Պատրաստ ենք մաքրելու
եւ սրբելու մեր հոգիները պահեցողու-
թեամբ եւ աղօթքով:**

**ՃՐԱԳ ԸԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak Ճրագ Թերթ
ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քինյ. Սարգիսեան**

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՊԱՏԱՐԱԳ**




ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ճշմարտօրէն, Ս. Պատարագը
ՄԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ՝ Աստուածորդայն
գոհաբերութեան Խորհուրդն է, ուր
ամէն անգամ պատարագուող Գառն
Աստուծոյն իր Մարմինն ու Արիւնը
կո տայ մեղանշական բնութեամբ՝
անկումի ենթակայ մարդուն:

Ինչպէս Վերջին Ընթրիքի սեղա-
նին վրայ հացն ու զինին Քրիստոսի
օրհնութեամբ փոխարկուեցան
Փրկչին մարմնոյն եւ Արեան,
նմանապէս՝ ամէն Ս. Պատարագի
խորհուրդին, Ս. Սեղան ընծայուող
ՆՇԽԱՐՆ ու ԳԻՆԻՆ նուիրա-
գործուելով եւ սրբագործուելով
գերահրաշօրէն կը փոխարկուին եւ
հաւատացեալներուն կ'ընծայուին,
որպէս մեղսաքաւիչ Ս. Հաղորդու-
թիւն, որպէս Մարմին եւ Արիւն
Քրիստոսի...

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



**ՔՈՒ ԽՍՏԵՐ ԽՆ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(ՍՂ.119.105)**

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ՓԵՏՐՈՒԱՐ 2024

ԹԻՒ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Եւ. 58.1-14: Հռ. 13.11-14.25: Ստ. 6.1-21

**ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 6.1-21**

Զգո՛յ՛, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայու-
թեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրու-
թիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ փող ու թմբուկով մի՛ ընէր, մարդոց ուշադրու-
թիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ
հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ:
Վստահ եղէ՛ք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ
ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ, թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ:
Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս եւ քու երկնաւոր Հայրդ՝ որ
անտեսանելի է, կը տեսնէ կատարածդ եւ քեզ կը վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն
ժողովարաններուն մէջ եւ հրապարակներուն անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ
իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէ՛ք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը:
Այլ՝ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ աղօթէ՛ քու երկնաւոր
Հօրդ, որ անտեսանելի է եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի
հատուցէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսնե-
րուն նման, որոնք կը կարծեն, որ եթէ երկար աղօթեն Աստուած պիտի լսէ զի-
րենք: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի,
նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէս աղօթեցէ՛ք.

**«Հայր մեր երչսաւոր, սրբաբանուի՛ ստուար. թող գայ արքայուհաւոր, թող
պատարուի քու պաթը, իսճուես որ երչսաւոր մեզ, այնուս ալ երչուր Վրայ:**

**Ամենօրեայ մեր շնորհ այսօր ես սուր: Ներէ՛ մեր յանձնաքները, իսճուես որ
մենք չեւ ներեւք նստնա, որոսք մեծի դեւ սոյսուես յանձնաք չեւ գործես: Եւ թոյլ
սի՛ ճար, որ փորձուեան մեզ իյսանք: Այլ՝ մեզ զարեւ անքսէ: Որովհետեւ քուիդ ես
սիճ՝ արքայուհաւոր, շորուհաւոր եւ փառքը. Ամէն»:**

Եթէ մարդոց ներք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի
ներէ ձեզի: Իսկ, եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն
ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախմանք, նոյն եւ առատ ուտելիքներով վայելելու օր:

Գլխաւոր շաբաթապահերու նախորդ շաբաթ օրը, կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը թոյլատրուի աւելի նոյն ուտել: Եկեղեցական օրացոյցի մէջ յաճախ կը հանդիպինք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարելոր պահերը ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յատկանշական է Մեծ Պահի նախընթաց Կիրակի օրը, որ կը կոչուի **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ**:

Բուն Բարեկենդանի օրը կը պատրաստեն նոյն սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախմանքներ եւ այլն:

Վանքերու մէջ նոյնիսկ Բուն Բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր **ԱԲԵՂԱԹՈՂ**:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, եկեղեցւոյ խորանի վարագոյրը կը գոցուի եւ նոյն օրը կը սկսի արդէն ապաշխարութեան շրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի գոց վարագոյրով խորանին ետեւը: Այսպիսով կը սկսի քառասունօրեայ ապաշխարութիւնը եկեղեցւոյ մէջ:

Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ կամ կարելոր սուրբերու տօներու առիթով, երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, վարագոյրը կը բացուի եւ տեղի կ'ունենայ բաց պատարագ:

Բուն Բարեկենդանի շաբաթանները կը պատմեն, թէ ինչպէ՞ս ստեղծուեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր գուարնացեալ անտխրական խնդութեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն Բարեկենդանի շաբաթաններու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի գուարնութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Ադամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Ադամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն Բարեկենդանի շաբաթանները, նոյն օրը գուարնացնող մարդոց կը յիշեցնեն, նաեւ Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

Սուրբ Գիրքը կը փոխէ մեր կեանքը *****

Կը պատմուի, թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձի կու գայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտէզի մը մէջ նստած երբ Սուրբ Գիրք կը կարդար, Ամերիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դո՛ւն, ո՛վ Ափրիկէցի, դո՛ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկէցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ ես Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ ճաշ տղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Անկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՉՊԿՆԿԱԿԵՆՔ ՀՐԱՇՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒԻ

Յիսուս երկու առիթներով հրաշքով կերակրեց ժողովուրդը: Առաջին անգամ, հինգ հացով եւ երկու ձուկով կերակրեց աւելի քան հինգ հազար հոգի (Մտ. 15.17-21), իսկ երկրորդ անգամ, եօթը հացով եւ քանի մը մանր ձուկերով կերակրեց աւելի քան չորս հազար հոգի (Մտ. 15.34-38): Ինչո՞ւ Յիսուս միշտ հրաշքով չկերակրեց մարդիկը, այլ՝ միայն երկու անգամ: Յովհան Ոսկեբերան կը հաստատէ, որ Յիսուս չուզեց միշտ հրաշքով կերակրել մարդիկը, նախ որպէսզի անոնք իրենց փոքրիկ ստրուկները չդառնային եւ երկրորդ, որպէսզի աւելի հոգեւոր իրականութեանց հետամուտ ըլլային:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Քրիստոս հրաշքով չի կերակրէր իր հետեւորդները, որպէսզի իրեն դիմողները միայն նիւթական հացի համար չդիմեն եւ որպէսզի մարդիկ չսպասեն, որ Քրիստոս հրաշալի միջոցներով իրենց պէտքերը գոհացնէ: Մարդիկ պէտք է սորվին իրենց ճակտի քրտինքով վաստկել իրենց օրուայ ապրուստը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

Դժուար պահեր կ'ունենանք մեր կեանքին մէջ եւ երբեմն կը յուսահատուինք: Եթէ յուսահատուինք կարդանք **Յո. 8.31-38** *****

Ի՞նչ կրնանք ըսել այս բոլորին դիմաց: Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ: Եթէ Աստուած իր Որդիին չխնայեց, այլ՝ մինչեւ իսկ զայն մահուան մատնեց մեզի համար, անոր հետ նաեւ ամէն բան պիտի չչնորիէ՞ մեզի: Ո՞վ կրնայ մեղադրել Աստուծոյ ընտրեալները: Ո՛չ որ, քանի Աստուած է արդարացրնողը: Կամ ո՞վ պիտի դատապարտէ: Յիսուս Քրիստո՞սը, որ մեզի համար մեռաւ՝ բայց մանաւանդ յարութիւն առաւ, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար: Անշուշտ ո՛չ: Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի սէրին: Նեղութիւնը, անձկութիւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկութիւնը, վտա՞նգը կամ սո՞րը: Ինչպէս Մաղմուսներուն մէջ գրուած է.

«Քեզի համար՝ մարդիկ մեզ կը սպաննեն ամէն օր. ոչխարի պէս սպանդանոց կը տանին»:

Բայց այս բոլորէն շա՛տ աւելի յաղթական դուրս կու գանք շնորհիւ անոր՝ որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած են, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ որեւէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրին, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: